# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 2.
Հեռ. 52-19-64. Ֆաքս 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

N 07/16/2561-16
20.05.16թ.

Ձեր № 282-ի 8
Առ 17.05.2016թ.

< ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>
ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր վերոնշյալ գրության տեղեկացնում ենք, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում տեղեկություն ստանալու հարցումները առանձնացված են և գրանցվում են քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման պահանջներից բխող տեղեկություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև դրանց վիճակագրության վարման վերաբերյալ կարգը մշակման փուլում է, և ներկայումս այդ գործընթացները իրականացվում են համաձայն Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին գործավարության կարգի (ՀՀ ԷԲՊ նախարարի 07.04.2010 թվականի N 45-Ն հրաման):

ԿԱՐԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատարող՝ Լ. Անանյան
Հեռ. 011 52 88 48